

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ**




**ԿԱՐԳ**

**ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՀԵՌԱԿԱ  
ՈՒՍՈՒՑՄԱՄԲ**

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ**

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ**

**ԵՐԵՎԱՆ 2016**



ՀԱՍՏԱՏՎԱԾ Է  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ  
ՈՐՈՇՄԱՄԲ ԱՐՁ. N 1 ԿԱՅԱՅԱԾ 04. 02. 2016Թ.  
ԳԻՏ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ, ՌԵԿՏՈՐ՝  
Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Բոլոնիայի գործընթացին համահունչ՝ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է միասնական եվրոպական կրթական դաշտին ինտեգրվելու ուղին: Բոլոնիայի հռչակագրի դրույթներով նախատեսված է ստեղծել բարձրագույն կրթության համաեվրոպական միասնական տարածք, որի առանցքային բաղադրիչներից մեկն է լինելու կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը: Նկատի ունենալով ՀՀ-ում կրթական բարեփոխումների ընթացքը, պահանջվում է վերոնշյալ համակարգի ներդրում:

- 1.1. Սույն կարգը (այսուհետ՝ Կարգ) սահմանում է ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում հեռակա ուսուցման ձևով բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերի կրեդիտային հենքով ուսումնական գործընթացի կազմակերպման միասնական կանոնները:
- 1.2. Կարգը ներառում է հեռակա ուսուցման ձևով ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների ստուգման և գնահատման համակարգը, ակադեմիական առաջադիմության չափանիշները, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կազմակերպման ընթացակարգը:
- 1.3. Կարգում տրված են նաև կրեդիտային համակարգում գործածվող առանձին տերմիններ, նկարագրված են համակարգի բնութագրիչները, բնորոշ գործառույթները և ընթացակարգերը:

## 2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 2.1. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Համաեվրոպական ECTS<sup>1</sup> կրեդիտային համակարգի հետևյալ սահմանումները և դրույթներն ընդունված են Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում և գործում են ակադեմիայի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում:

1. **Կարողությունը** գիտելիքի, իմացության և ունակությունների դինամիկ համակցություն է, որի ձևավորումը կրթական ծրագրի հիմնական նպատակն է: Այն կարող է լինել մասնագիտական (առանձնահատուկ ուսման տվյալ բնագավառի համար) և ընդհանուր:

<sup>1</sup> Կրեդիտների փոխանցման և կուտակման եվրոպական համակարգ:

2. **Կրթական արդյունքն** այն է, ինչ պետք է գիտենա, հասկանա և (կամ) կարողանա անել ուսանողն ուսումնառության ավարտին: Կրթական արդյունքը զուգակցվում է համապատասխան գնահատման չափանիշով, որը հնարավորություն է տալիս դատելու դասընթացով սահմանված կրթական արդյունքի ձեռքբերման վերաբերյալ: Կրթական արդյունքը և գնահատման չափանիշը միասին սահմանում են կրեդիտի շնորհման պահանջները:
3. **Կրթական (ուսումնական) մոդուլն** ուսումնական ծրագրի ամենափոքր, համեմատաբար ինքնուրույն միավորն է, որի համար կրեդիտ է տրվում: Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ: Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները ուսանողին շնորհվում են ամբողջությամբ, այլ ոչ թե առանձին մասերով:
4. **ECTS կրեդիտը** դասընթացը (կրթական մոդուլը) ավարտելու և դրա ելքային կրթական արդյունքները ձեռք բերելու համար ուսանողից պահանջվող ուսումնառության ժամաքանակով արտահայտված բեռնվածքի չափման համընդունելի միավոր է, որը տրվում է ուսանողին դասընթացով նախանշված կրթական արդյունքների դրական գնահատումից հետո:
5. **ECTS կրեդիտի կարևորագույն հատկանիշներն են.**
  - ECTS կրեդիտով սահմանվող ուսումնական բեռնվածքը ներառում է ուսանողի լսարանային, արտալսարանային և ինքնուրույն իրականացվող բոլոր տեսակի ուսումնական աշխատանքները, այդ թվում՝ մասնակցությունը դասախոսություններին, սեմինար և գործնական պարապմունքներին, լաբորատոր աշխատանքներին և պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքների կատարումը, քննություններին նախապատրաստվելը և դրանք հանձնելը, անհատական հետազոտությունը և այլն,
  - կրեդիտը չափում է ուսանողի միայն ուսումնական բեռնվածքը և չի գնահատում դասընթացի կամ կրթական մոդուլի բարդության աստիճանը, կարևորությունը և մակարդակը կրթական ծրագրում կամ ուսանողի կողմից դրա յուրացման որակը (գնահատականը),
  - կրեդիտն ուսանողին տրվում է միայն կրթական մոդուլով նախանշված ելքային կրթական արդյունքի գնահատման շեմային չափանիշները բավարարելուց հետո: Ուսանողը վաստակում է կրթական մոդուլին հատկացված կրեդիտների լրիվ քանակը՝ քննական արդյունքների (գնահատականների կամ գնահատման

միավորների) հետ միասին,

- ECTS կրեդիտը չի չափում դասախոսի ուսումնական գործունեության (դասավանդման) աշխատաժամայր: Այն չափում է ուսանողի ուսումնական աշխատանքի (ուսումնառության) ծավալը,
- կրեդիտը չի փոխարինում ուսանողի՝ թվանշաններով գնահատմանը, իսկ ուսանողի վաստակած կրեդիտների քանակը չի որոշվում նրա ստացած թվանշաններով (գնահատման միավորներով),
- կրեդիտը չի արտահայտում ուսանողի ստացած գիտելիքի որակը, այն չափվում է գնահատականներով:

**6. Կրեդիտային համակարգն** ուսումնական գործընթացի կազմակերպման, ակադեմիական կրեդիտների միջոցով ուսումնառության արդյունքների հաշվառման (արժևորման), կուտակման և փոխանցման համակարգ է, որտեղ համապատասխան որակավորումը շնորհվում է կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի ձեռքբերումից հետո:

**7. Կրեդիտների փոխանցման և կուտակման ECTS համակարգը** միասնական համաեվրոպական կրեդիտային համակարգ է, որտեղ ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածքը 1 ուսումնական տարում գնահատվում է 60 ECTS կրեդիտ: Այն նախատեսված է Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում ուսանողների ձեռք բերած կրթական արդյունքների չափման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ փոխանցումը դյուրացնելու համար:

**8. ECTS համակարգի կարևորագույն հատկանիշներն են.**

- կիսամյակը, ուսումնական տարին կամ ուսումնառության լրիվ ծրագիրը հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է վաստակի կրթական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ քանակը,
- կրեդիտներ հատկացվում են կրթական ծրագրի՝ գնահատման ենթակա բոլոր բաղկացուցիչներին՝ դասընթացներին, կրթական մոդուլներին, պրակտիկաներին, կուրսային և ավարտական աշխատանքներին և այլն,
- կրթական ծրագիրը և դրա առանձին բաղկացուցիչները բնութագրող բոլոր պայմանները՝ ծրագրի նպատակը և ավարտական պահանջները, դասընթացների ելքային կրթական արդյունքները և հատկացված կրեդիտները, ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդները և այլն, հրապարակվում են նախապես և հասանելի են դրանցից օգտվողներին (ուսանողներին և դասախոսներին):

## **2.2. ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

### **2.2.1. Կրեդիտային համակարգի հիմնական գործառույթները 2-ն են՝ ա) կրեդիտների փոխանցում.**

Այս գործառույթը ենթադրում է ուսումնական ծրագրի (պլանի) բոլոր դասընթացների և կրթական մոդուլների աշխատածավալների արտահայտում կրեդիտների օգնությամբ, ինչը հնարավոր է դարձնում կրեդիտներով չափված կրթական արդյունքի փոխանցումը ծրագրերի և բուհերի միջև,

### **բ) կրեդիտների կուրսակում.**

Այս գործառույթի իրականացումն ենթադրում է կրթական կրեդիտների աստիճանական կուրսակման գործընթացի առկայություն, ինչն իրականացվում է ուսանողի անհատական ուսումնական ծրագրի օգնությամբ:

Նշված գործառույթները բնութագրվում են մի շարք հատկանիշներով և ուղեկցվում համապատասխան ընթացակարգերով:

### **2.2.2. Կրեդիտների փոխանցման գործառույթի հիմնական հատկանիշներն են.**

- գործում են մոդուլացված ուսումնական ծրագրեր, որոնց բոլոր բաղադրամասերի (դասընթացներ, կրթական մոդուլներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, պրակտիկաներ և այլն) աշխատածավալները տրված են ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն աշխատանք) արտահայտող ECTS կրեդիտներով,
- կրեդիտներով արտահայտված կրթական արդյունքների փոխադարձ ճանաչման և որոշակի թվով կրեդիտների՝ ծրագրից ծրագիր փոխանցման (տեղափոխման) հնարավորություն նույն բուհի ներսում կամ բուհերի միջև՝ ընդունող ծրագրի պահանջներին համապատասխան:

### **2.2.3. Կրեդիտների կուրսակման գործառույթի հիմնական հատկանիշներն են.**

- պարտադիր և ընտրովի դասընթացներից բաղկացած ուսումնական ծրագրեր, որոնցից յուրաքանչյուրի յուրացման հաջորդականությունը սահմանվում է դասընթացների նախապայմաններով,
- ուսանողի կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման ընթացակարգերի առկայություն,
- ուսանողների ուսումնառության անհատական ծրագրերի առկայություն,
- դասընթացի համար մեկից ավելի ուսումնական հոսքերի առկայության դեպ-

քում ուսանողի կողմից դրանց ընտրության հնարավորություն՝ ելնելով դասընթացի կայացման ժամանակացույցից և (կամ) դասախոսի նախապատվությունից,

- ուսանողի կողմից ուսումնառության ինտենսիվության, հետևաբար նաև ուսումնառության ծրագրի տևողության կարգավորման հնարավորություն:

Ակադեմիայի բակալավրի և մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրերում կրեդիտային համակարգը ներդրվել է 2014/15 ուսումնական տարվանից:

### **2.3. ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՇԽԱՏԱԾԱՎԱԼԸ**

1. Հեռակա ուսուցմամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի տևողությունը կազմում է 2,5 տարի (5 կիսամյակ): Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 3 շաբաթը հատկացվում է տեսական ուսուցման, 9-ը՝ ինքնուրույն աշխատանքի և խորհրդատվությունների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար:
2. Հեռակա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրում ուսանողի շաբաթական **լսարանային** առավելագույն բեռնվածությունը կազմում է 36 ժամ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում՝ 24 ժամ:
3. 1 ECTS կրեդիտը համարժեք է ուսանողի 30 ժամ լրիվ (լսարանային, արտալսարանային և ինքնուրույն) ուսումնական բեռնվածությանը: Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ բեռնվածության առավելագույն չափը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի:
4. Հեռակա ուսուցմամբ բակալավրի պատրաստման ծրագրի տևողությունը 5 տարի (10 կիսամյակ) է: Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է 16-շաբաթյա տևողությունը, որից 4 շաբաթը հատկացվում է տեսական ուսուցման, 8-ը՝ ինքնուրույն աշխատանքի և խորհրդատվությունների, իսկ 4-ը՝ քննաշրջանի համար:
5. Հեռակա ուսուցման համակարգում ընդգրկված ուսանողը կիսամյակում պետք է ունենա 24 կրեդիտ ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով), իսկ մեկ ուսումնական տարում՝ 48 կրեդիտ:
6. Որոշ դեպքերում, ուսման բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողը սահմանված կարգով կարող է ստանձնել լրացուցիչ ուսումնական բեռնվա-

ծություն:

7. Հեռակա ուսուցման բակալավրի կրթական ծրագրի ուսումնական լրիվ աշխատաժամալը 240 կրեդիտ է, իսկ մագիստրոսի կրթական ծրագրինը՝ 120 կրեդիտ:

### **3. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԸ**

1. Ուսումնական ծրագրում (պլանում) ներառված դասընթացները կամ կրթական մոդուլները ներկայացվում են հատկացված կրեդիտների հետ միասին:
2. Մեծածավալ դասընթացներն անհրաժեշտության դեպքում բաժանվում են 1 կիսամյակ տևողությամբ առանձին կրթական մոդուլների:
3. Դասընթացները (կրթական մոդուլները) ըստ յուրացման բնույթի բաժանվում են 2 հիմնական խմբի՝
  - ա) պարտադիր դասընթացներ, որոնց յուրացումն ամրագրված է որոշակի կիսամյակներում,
  - բ) ընտրովի դասընթացներ, որոնք առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ դրանց յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

### **4. ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ**

1. Կրթական ծրագրի առանձին մոդուլներին կրեդիտների հատկացումը ելնում է մոդուլով սահմանված կրթական արդյունքին հասնելու համար ուսանողից պահանջվող միջին աշխատաժամանակի (լրիվ ուսումնական բեռնվածության) իրատեսական կանխատեսումից:
2. Հատկացվող կրեդիտների թվի և լսարանային (կոնտակտային) ժամերի միջև միարժեք կապ չկա: Կրեդիտների թիվը կախված է նաև պարապմունքի ձևից (դասախոսություն, սեմինար, գործնական կամ լաբորատոր պարապմունք և այլն), ուսումնառության, դասավանդման և գնահատման մեթոդներից և այլն:
3. Դասընթացի ծրագիրը մշակող ուսումնական կառույցը (ամբիոնը) այնպես է պլանավորում ուսանողի ուսումնական աշխատանքը, որպեսզի դրա կատարման համար պահանջվող ժամաքանակը համապատասխանի դասընթացին հատկացված կրեդիտների ժամային համարժեքին:
4. Կրթական մոդուլին հատկացված կրեդիտները պետք է ներկայացվեն ամբողջական թվերով:



## **5. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

### **5.1. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

1. Բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ակադեմիայի հեռակա ուսուցման ուսանողը պետք է ծրագրի կատարման արդյունքում հաջողությամբ լրացնի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ)<sup>2</sup> պետք է կազմի առնվազն 9,00:
2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (ամփոփիչ քննություն, ավարտական աշխատանքի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածն ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 9,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:
3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն մինչև 36 կրեդիտ հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթամասից (այդ թվում՝ 4 կրեդիտ՝ ընտրովի դասընթացների առաջարկվող ցանկից), 10 կրեդիտ՝ մաթեմատիկական և բնագիտական դասընթացների կրթամասից (ներառյալ 2 կրեդիտ՝ ընտրովի դասընթացների ցանկից) և առնվազն 20 կրեդիտ՝ պրակտիկայից և եզրափակիչ ատեստավորման ձևերից:
4. Մնացած առնվազն 174 կրեդիտների բովանդակային կազմը սահմանվում է ելնելով տվյալ մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական կարողությունների և հմտությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր մասնագիտության համար տրվում է առանձին:

### **5.2. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

1. Մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար ակադեմիայի հեռակա ուսուցման ուսանողը ծրագրի կատարման արդյունքում պետք է հաջողությամբ լրացնի 120 կրեդիտ ուսումնագիտական բեռնվածություն, որի համար հաշվարկված հանրագումարային միջին որակական գնահատականը (ՄՈԳ) պետք է կազմի առնվազն 12,00:

---

2. ՄՈԳ-ի վերաբերյալ տե՛ս սույն կարգի 6.5. կետը:

2. Մինչև ծրագրի ամփոփիչ ատեստավորումն (մագիստրոսական թեզի պաշտպանություն) ընկած ժամանակահատվածը ուսանողի ՄՈԳ-ը պետք է կազմի առնվազն 12,00: Հակառակ պարագայում, որակավորում ստանալու համար ուսանողը պետք է բարձրացնի իր առաջադիմության ցուցանիշը մինչև սահմանված նվազագույն արժեքը՝ կրկնելով անհրաժեշտ քանակությամբ դասընթացներ:
3. Բոլոր ուսանողները, մասնագիտությունից անկախ, պետք է կուտակեն առնվազն 6 կրեդիտ՝ ընդհանուր դասընթացների կրթամասից, և 48 կրեդիտ՝ հետազոտական կառուցամասից.
4. Մնացած կրեդիտների (մինչև 66) բովանդակային կազմը սահմանվում է մասնագիտական պարտադիր կրթամասով և ընտրովի դասընթացներով ելնելով տվյալ մասնագիտությամբ մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ելքային կրթական արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձեռքբերման պայմանից, և յուրաքանչյուր ծրագրի համար տրվում է առանձին:

## **6. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

### **6.1. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ**

1. Ակադեմիայում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝
  - ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,
  - բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության

տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.
  - ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
  - բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),
  - գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում:
  - դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:
3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատաձևավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունն ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝
  - ա) եզրափակիչ գնահատումով (քննական) դասընթացներ,
  - բ) ստուգարքային դասընթացներ:

## **6.2. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **6.2.1. Բակալավրի կրթական ծրագիր.**

Բակալավրի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել եզրափակիչ գնահատումով առավելագույնը 6 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

1. **Եզրափակիչ գնահատումով դասընթացը** քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 1 քննություն:

Ընթացիկ (միջանկյալ) ստուգումների, ամփոփիչ ստուգարքների և եզրափակիչ քննությունների իրականացման ձևը (որպես կանոն՝ գրավոր) և բովանդակությունը որոշում է առարկան դասավանդող ամբիոնը:

2. **Եզրափակիչ գնահատումով դասընթացից** (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ( $Գ_{արդ.}$ ) ձևավորվում է կիսամյակի ընթացքում ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության  $Գ_{մաս.}$  միավորը որոշվում է աղյուսակ 1-ում բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

Աղյուսակ 1.

<i>Մասնակցության աստիճանը (%)</i>	<i>Հարկացվող միավորը</i>
81-100	2
51-80	1
≤50	0

**Օրինակ 1. Եթե 12 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 5 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝**

$$\left(1 - \frac{5}{12}\right) \times 100\% = (1 - 0,42) \times 100\% = 58\%:$$

**Համաձայն աղյուսակի՝  $Գ_{մաս.} = 1$  միավոր:**

**Օրինակ 2. Եթե 24 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 3 ժամ անհարգելի և 2 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝**

$$\left(1 - \frac{3}{24-2}\right) \times 100\% = (1 - 0,14) \times 100\% = 86\%:$$

**Համաձայն աղյուսակի՝  $Գ_{մաս.} = 2$  միավոր:**

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 1 ընթացիկ (միջանկյալ) քննության արդյունքից ( $Բ_{ընթ.}$ ), որին հատկացվում է առավելագույնը 8 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ( $Բ_{եզր.}$ ), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած

միավորների գումար՝

$$G_{արդ.} = G_{մաս.} + P_{ընթ.} + P_{եզր.}:$$

Ըստ այդմ, **եզրափակիչ գնահատումով դասընթացն** ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով<sup>3</sup>).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	G <sub>մաս.</sub>	P <sub>ընթ.</sub>	P <sub>եզր.</sub>	G <sub>արդ.</sub>
Միավորը	2	8	10	20

**Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 1 միավոր, դասընթացի համար նախատեսված 1 ընթացիկ քննությունից նա վաստակել է 4 միավոր, իսկ եզրափակիչ քննությունից՝ 8 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝**

$$G_{արդ.} = 1 + 4 + 8 = 13:$$

3. Լաբորատոր աշխատանքի ձևեր ունեցող **եզրափակիչ գնահատումով դասընթացի** ընթացիկ (միջանկյալ) քննությանն ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակահատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60% կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ պարագայում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ (միջանկյալ) քննությանը, իսկ քննական ամփոփագրում նրա անվան դիմաց դրվում է «0» միավոր:

4. **Ստուգարքային դասընթացը** գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող ստուգումների (գնահատումների) արդյունքներով:

5. **Ստուգարքային դասընթացից** (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած ամփոփիչ (կիսամյակային) գնահատականը (G<sub>ամփ.</sub>) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից:

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող ստուգումների արդյունքներից:

<sup>3</sup> Ընթացիկ քննության մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը՝ առնվազն 0,5 է:

### 6.2.2. Մագիստրոսի կրթական ծրագիր.

Մագիստրոսի կրթական ծրագրում ներառված եզրափակիչ գնահատումով դասընթացների գնահատման կառուցվածքը նկարագրված է ստորև.

1. Դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 1 ընթացիկ (միջանկյալ) քննություն: Ընթացիկ և եզրափակիչ քննությունների անցկացման ձևը որոշվում է դասընթացը կազմակերպող ամբիոնում:
2. Դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը/միավորը ( $Գ_{արդ.}$ ) ձևավորվում է կիսամյակի ընթացքում ըստ հետևյալ բաղադրամասերի.
  - ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության  $Գ_{մաս.}$  միավորը որոշվում է 6.2.1. կետում բակալավրի կրթական ծրագրի համար նկարագրված եղանակով,
  - բ) ուսուցանվող նյութի ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 1 ընթացիկ (միջանկյալ) քննության արդյունքից ( $Բ_{ընթ.}$ ), որին հատկացվում է առավելագույնը 8 միավոր,
  - գ) եզրափակիչ քննության արդյունքից ( $Բ_{եզր.}$ ), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Գ_{արդ.} = Գ_{մաս.} + Բ_{ընթ.} + Բ_{եզր.}:$$

Ըստ այդմ, մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով).

Աղյուսակ 3.

Գնահատման բաղադրամասը	$Գ_{մաս.}$	$Բ_{ընթ.}$	$Բ_{եզր.}$	$Գ_{արդ.}$
Միավորը	2	8	10	20

3. Գնահատման վերը նկարագրված եղանակը կիրառվում է ուսումնական պլանով կրեդիտ հատկացված դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար: **Հետազոտական կառուցամասի** մոդուլները, այդ թվում նաև

պրակտիկաները, ինչպես նաև մագիստրոսական թեզը գնահատվում են 11.2. կետում բերված 20 միավորանոց սանդղակով (աղ. 6), գնահատման չափանիշներին համապատասխան:

### **6.3. ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):
2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները, և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնական բաժին:
3. Ընթացիկ ստուգումներն ու քննություններն անց են կացվում ուսումնառության ընթացքում, դասերից դուրս:
4. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում:
5. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:
6. Բոլոր գրավոր քննությունները և ստուգումները գրանցվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի թերթիկներում:
7. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ու ստուգումների գնահատականը հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին:

#### 6.4. ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ ԵՎ ՆՇԱԳՐՈՒՄԸ

1. Ակադեմիայում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Աղյուսակ 4.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»
0	«Չներկայացած»
-	«Ստուգված»/«Չստուգված»

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «**Չստուգված**», կրեդիտներ չեն տրվում:

#### 6.5. ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու նպատակով, ակադեմիայի ֆակուլտետները յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են **ակադեմիական տեղեկագիր<sup>4</sup>**, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

4. Ակադեմիական տեղեկագրի օրինակները բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի համար կցված են սույն կարգին (հավելվածներ 1 և 2):



2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:
3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները<sup>5</sup>
  - գումարային կրեդիտների քանակը,
  - գնահատված կրեդիտների քանակը,
  - վարկանիշային միավորները,
  - միջին որակական գնահատականը:
4. **Գումարային կրեդիտը (Կ)** կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:
5. **Գնահատված կրեդիտը (ԳԿ)** գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

$$\text{ԳԿ} = \sum \text{Կրեդիտ:}$$

6. **Վարկանիշային միավորը (ՎՄ)** յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \sum_{i=1}^k \text{Կրեդիտ}_i \times \text{Գարդ}_i ,$$

որտեղ  $i$ -ն և  $k$ -ն բոլոր առարկաների (բացառությամբ ստուգարքայինների), կուրսային աշխատանքների, պրակտիկաների (բացառությամբ ուսումնական), հետազոտական աշխատանքների և ամփոփիչ ատեստավորման համապատասխանաբար համարը և քանակն են, իսկ Կրեդիտ $_i$ -ն և Գ $_{արդ}_i$ -ն՝  $i$ -րդ դասընթացի կրեդիտը և նույն դասընթացից ուսանողի ստացած կիսամյակային արդյունարար միավորն է (գնահատականը):

**Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝**  

$$\text{ՎՄ} = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238' 300 \text{ հնարավորից } (5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20):$$

<sup>5</sup> Տես ակադեմիական տեղեկագրին կից օրինակը:

7. **Միջին որակական գնահատականը (ՄՈԳ)** կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \text{ՎՄ/ԳԿ}:$$

**Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝**

$$\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15,87 \text{ ' } 20 \text{ հնարավորից:}$$

8. **Հաշվառվում** և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են *կիսամյակային* (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և *արդյունարար* (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

#### **6.6. ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ**

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են **առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա**։
2. Ուսանողը համարվում է *առաջադիմող*, եթե՝
  - ա) կիսամյակում ունի առնվազն 24 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),
  - բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների<sup>6</sup> կրեդիտները:
3. Ուսանողը համարվում է *փորձաշրջանի կարգավիճակում*, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը, և ռեկտորատի կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):
4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:
5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանի հետ, իսկ մագիստրոսի կրթական ծրագրում ուսանողին կարող է տրվել նաև լրացուցիչ ժամանակ՝ դասընթացը կրկնելու համար:
6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման

<sup>6</sup> Տես դասընթացների ա) խումբը, բաժին 3, 3-րդ կետ:

ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից: Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:

7. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են նրանց միջին որակական գնահատականներով:

## **7. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԿՆՈՒՄԸ**

1. Դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանը որոշելիս հաշվի չեն առնվում հարգելի պատճառներով բացակայության դեպքում բաց թողնված դասաժամերը, եթե այն հավաստող սահմանված կարգի բժշկական տեղեկանքը կամ դիմումը ներկայացվում է հաճախումները վերսկսելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
2. Քննությանը կամ ստուգմանը չներկայանալը համարվում է հարգելի միայն այն դեպքում, եթե ուսանողը մինչև քննության օրը ներառյալ հիվանդության մասին գրավոր իրազեկում է դեկանատ, իսկ հիվանդության վերաբերյալ համապատասխան բժշկական տեղեկանքը ներկայացնում է մինչև բուժման շրջանի ավարտին հաջորդող օրը ներառյալ:
3. Հարգելի պատճառով ընթացիկ քննությանը կամ ստուգմանը չներկայացած ուսանողը կարող է այն հանձնել մինչև եզրափակիչ քննությունը, նախապես այն համաձայնեցնելով դեկանատի և պարապոզ դասախոսի հետ:
4. Հարգելի պատճառներով եզրափակիչ քննությանը չներկայացած ուսանողն ակադեմիական պարտքերի մարման շրջանում կարող է վերահանձնել այն:
5. **Եզրափակիչ գնահատումով դասընթացի** գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

**Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 1 միավոր, դասընթացի համար նախատեսված 1 ընթացիկ քննությունից նա վաստակել է 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 3 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝**

$$q_{արդ.} = 1 + 2 + 3 = 6,$$

**որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 3 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա**

$$Q_{տրք} = 6 + (5 - 3) = 8:$$

6. Եթե մագիստրոսի կրթական ծրագրում դասընթացի գնահատման արդյունարար միավորը գտնվում է 5-ից 7 միավորի տիրույթում, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում նախորդ կետում բերված պահանջներին համապատասխան, ընդ որում՝ նույն կիսամյակի ընթացքում ուսանողն ունի յուրաքանչյուր այդպիսի դասընթաց վերահանձնելու ընդամենը մեկ հնարավորություն առաջին լուծարքային շրջանում: 4 միավոր և ցածր արդյունք ցուցաբերած մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողը պարտավոր է կրկնել դասընթացը:
7. Քննաշրջանի ընթացքում եզրափակիչ գնահատումով դասընթացներից 3 և ավելի պարտք ունեցող ուսանողներն ազատվում են ակադեմիայից անբավարար ակադեմիական առաջադիմության պատճառով:
8. Ակադեմիական պարտքերի մարման շրջանում միևնույն դասընթացից 2 անգամ անբավարար ստացած ուսանողներն ազատվում են ակադեմիայից անբավարար ակադեմիական առաջադիմության պատճառով:
9. Ուսումնառության 1-ից 3-րդ կիսամյակներում 2 դասընթաց չհանձնած մագիստրոսի կրթական ծրագրով սովորող ուսանողին հնարավորություն է տրվում կրկնել դասընթացները հաջորդ աշնանային կիսամյակում շարունակելով ուսումը: 4-րդ և 5-րդ կիսամյակներում որևէ դասընթաց չհանձնած (0-4 միավոր վաստակած) ուսանողն ազատվում է ակադեմիայից:
10. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:
11. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

## **8. ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՄԱՍԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

1. Ուսումնառության առաջին կիսամյակի սկզբում մագիստրոսի կրթական ծրագրում ընդգրկված ուսանողը ծրագրի ղեկավարից ստանում է ուսումնառության իր անհատական ծրագրի ձևաթերթը, որտեղ նախապես լրացված են ուսումնական և հետազոտական կառուցամասերի բաղկացուցիչ դասընթացները և գիտակրթական մոդուլները՝ բացառությամբ ընտրովի դասընթացների:
2. Անհատական ծրագրում տրվում է դասընթացների ընտրացանկն ըստ ուսման տարիների և կիսամյակների՝ դրանց հատկացված կրեդիտների հետ միասին: Մագիստրոսի կրթական ծրագրի ուսանողների ուսումնառության անհատական ծրագրի ձևաթերթը բերված է *հավելված 3*-ում:
3. Ուսման առաջին շաբաթում ուսանողն իր ուսումնական խորհրդատուի հետ միասին լրացնում է ընտրովի դասընթացներն ուսումնառության իր անհատական ծրագրում, որն այնուհետև հաստատվում է ծրագրի ղեկավարի կողմից և ներկայացվում դեկանատ:
4. Անհատական ծրագրում ներառված տվյալ կիսամյակի ընտրովի դասընթացներին ուսանողների գրանցումն իրականացվում է համապատասխան ֆակուլտետում: Բոլոր ուսանողները պետք է գրանցված լինեն մինչև տվյալ կիսամյակի 1-ին շաբաթվա վերջը: Սահմանված վերջնաժամկետից հետո դասընթացներին մասնակցելու բոլոր տեսակի գրանցումները դադարեցվում են:
5. Հետագա կիսամյակների ընթացքում, անհրաժեշտության դեպքում, ուսանողը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության իր անհատական ծրագրի դասընթացների ընտրացանկում նախապես ստանալով ուսումնական խորհրդատուի և ծրագրի ղեկավարի համաձայնությունը: Ուսումնառության անհատական ծրագրի փոփոխությունների ձևաթերթը բերված է *հավելված 4*-ում:
6. Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսի կրթական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել:
7. Անհատական ծրագրի փոփոխությունը ենթադրում է դասընթացի բացթողում, նոր դասընթացի ընտրություն (ավելացում) ընտրացանկում, որի իրականացման ընթացակարգը հետևյալն է.

- ուսանողը կարող է բաց թողնել իր ընտրած դասընթացն ուսումնական խորհրդատուի համաձայնությամբ մինչև պարապմունքների 1-ին շաբաթվա վերջը,
